

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Բուլղարիայի  
Հանրապետության կառավարության միջև ստանդարտացման,  
չափագիտության և սերտիֆիկացման բնագավառում  
համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և  
Բուլղարիայի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝  
Պայմանավորվող կողմեր,  
տնտեսական և առևտրական հարաբերություններում  
տեխնիկական խոչընդոտների վերացման նպատակով,  
ձգտելով զարգացնել համագործակցությունը ստանդարտացման,  
չափագիտության և սերտիֆիկացման բնագավառում,  
ելնելով միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված  
սկզբունքներից և նորմերից,  
հասկանալով դրանց նշանակությունը մարդու կյանքի և  
առողջության անվտանգությունն ապահովելու, շրջակա միջավայրի  
պահպանության գործում,  
ղեկավարվելով երկու Պայմանավորվող կողմերի տնտեսական  
շահերով, երկու պետությունների գործող օրենսդրության  
շրջանակներում,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1

Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման  
համատեղ աշխատանքներ կատարելու ընթացքում Պայմանավորվող  
կողմերը համագործակցությունը իրականացնում են լրացուցիչ  
համաձայնագրերի, արձանագրությունների և ծրագրերի հիման վրա,  
որոնք նախատեսում են.

ազգային ստանդարտների ներդաշնակեցման ապահովում  
միջազգային և եվրոպական ստանդարտներին՝ գիտելիս տեխնիկական  
համագործակցության զարգացման և առևտրի բնագավառում  
տեխնիկական խոչընդոտների հաղթահարմանը աջակցելու համար,

փոխադարձաբար մատակարարվող արտադրանքի նորմատիվ  
փաստաթղթերի ներդաշնակեցման համատեղ աշխատանքների  
իրականացում,

չափագիտության ազգային մարմինների կողմից իրականացվող չափման միջոցների փորձարկումների, տեսակի հաստատման արդյունքների և հավատարմագրված կալիբրովկա /ստուգաչափում/ իրականացնող լաբորատորիաների կողմից կատարված կալիբրովկայի /ստուգաչափման/ արդյունքների փոխադարձաբար ճանաչման աշխատանքների կատարում,

ֆիզիկական մեծությունների պետական և աշխատանքային էտալոնների ստեղծման, կատարելագործման, բաղդատման և նյութերի ստանդարտ նմուշների մշակման և արտադրման համատեղ աշխատանքների իրականացում,

հավատարմագրված սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների, փոխադարձաբար մատակարարվող արտադրանքի փորձարկման և սերտիֆիկացման արդյունքների փոխադարձաբար ճանաչման աշխատանքների կատարում:

## Հոդված 2

Պայմանավորվող կողմերը փոխանակում են ստանդարտացման ազգային մարմինների կողմից հրատարակվող նորմատիվ փաստաթղթեր, տեղեկություն, պարբերական հրատարակություններ, այն է՝

ազգային ստանդարտների քարտազրացուցակներ, առանձին ազգային ստանդարտներ, նորմեր և կանոններ /ընթացակարգեր/,

ընդհանուր տեղեկատվություն և հրատարակություններ սերտիֆիկացման, փորձարկման լաբորատորիաների, սերտիֆիկացման մարմինների հավատարմագրման վերաբերյալ, պարտադիր սերտիֆիկացման ենթակա արտադրանքի ցանկեր,

տեղեկատվություն և նյութեր ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման բնագավառում մասնագետների ուսուցման և որակավորման բարձրացման ծրագրերի վերաբերյալ:

## Հոդված 3

Պայմանավորվող կողմերը սահմանում են փոխադարձաբար մատակարարվող արտադրանքի, դրա վերաբերյալ գործող նորմատիվ փաստաթղթերի և նորմատիվ փաստաթղթերին ապրանքի համապատասխանության սերտիֆիկատների օրինակների համաձայնեցված ցանկը և այդ մասին տեղեկացնում իրենց իրավասու մարմիններին:

#### Հոդված 4

Սույն Համաձայնագրով նախատեսված աշխատանքների համակարգումը և իրագործումը հանձնարարվում է.

Հայաստանի Հանրապետությունում` Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման վարչությանը,

Բուլղարիայի Հանրապետության դեպքում` Բուլղարիայի Հանրապետության ստանդարտացման և չափագիտության կոմիտեին:

#### Հոդված 5

Սույն Համաձայնագրի դրույթները անհրաժեշտության դեպքում կոնկրետացվում են սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածում նշված մարմինների միջև լրացուցիչ համաձայնագրերով և արձանագրություններով` Պայմանավորվող կողմերի օրենսդրությամբ սահմանված կարգով:

#### Հոդված 6

Պայմանավորվող կողմերը ապահովում են սույն Համաձայնագրի շրջանակներում ստացվող փաստաթղթերի և տեղեկության գաղտնիությունը, եթե փոխանցող Պայմանավորվող կողմը նշում է դրանց գաղտնիության մասին:

Համագործակցության ընթացքում ստացված գիտատեխնիկական տեղեկությունը Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է ազատ օգտագործել, եթե մյուս Պայմանավորվող կողմը չի նշել նրա գաղտնիության մասին: Այդ տեղեկությունը երրորդ կողմի կարող է փոխանցվել միայն այն տրամադրող Պայմանավորվող կողմի համաձայնությամբ:

#### Հոդված 7

Պայմանավորվող կողմերը կհամագործակցեն ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման զանազան միջազգային և տարածաշրջանային այն կազմակերպություններին անդամակցելու կամ մասնակցելու գործում, որոնց անդամ է Պայմանավորվող կողմերից մեկը:

## Հոդված 8

Պայմանավորվող կողմերը փոխանակում են մասնագետների և դասախոսների պատվիրակություններ՝ ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման բնագավառում փորձի ուսումնասիրության, խորհրդակցությունների անցկացման և մասնագետների նախապատրաստման նպատակով, որը Պայմանավորվող կողմերը որոշում են լրացուցիչ:

## Հոդված 9

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կատարման հետ կապված բոլոր վիճելի հարցերը Պայմանավորվող կողմերի միջև լուծվելու են փոխադարձ խորհրդակցությունների և բանակցությունների ճանապարհով:

## Հոդված 10

Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված կարգով:

## Հոդված 11

Սույն Համաձայնագիրը չի շոշափում ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման բնագավառում նախկինում երրորդ երկրների հետ Պայմանավորվող կողմերի կնքած մյուս Համաձայնագրերի գործողությունը:

## Հոդված 12

Համագործակցության ֆինանսավորումը կիրականացվի Պայմանավորվող կողմերի պայմանավորվածության հիման վրա:

## Հոդված 13

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում վերջին գրավոր ծանուցման ստացման օրվանից, որով Պայմանավորվող կողմերը դիվանագիտական ուղիներով ծանուցում են միմյանց սույն Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու համար իրենց օրենսդրության համաձայն անհրաժեշտ բոլոր ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ դիվանագիտական ճանապարհով գրավոր տեղեկացնելով մյուս Պայմանավորվող կողմին իր մտադրության մասին:

Համաձայնագրի գործողությունը դադարում է այդ ծանուցումը մյուս Պայմանավորվող կողմի ստանալուց վեց ամիս հետո:

Կատարված է Երևան քաղաքում 1999 թվական դեկտեմբերի 1-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, բուլղարերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի մեկնաբանման ընթացքում առաջացած տարաձայնությունների դեպքում կգերակայի ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2000 թվականի մայիսի 10-ից: